<<ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ>>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ս.ԼՊՈՒՏՅԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## Հայաստանի շախմատի պատանիների առաջնության

## երևանյան ընտրական փուլ

**Ժամկետները՝** 20-28 փետրվարի 2023թ.

**Ժամակարգը՝** 90-ական րոպե մինչև պարտիայի ավարտը, յուրաքանչյուր քայլի համար 30 վայրկյան հավելումով՝ սկսած 1-ին քայլից:

**Անցկացման վայրը՝** Հայաստանի շախմատի ակադեմիա/հասցե՝ ք. Երևան Շևչենո 34/:

Առաջնությունն անցկացվելու է 5 առանձին խմբերով:

**Մուտքավճարը՝** 3000 ՀՀ դրամ

**Ժամանակացույց՝**

| Ամսաթիվ | Խաղափուլ | Ժամ |
|---|---|---|
| 20 փետրվարի | 1-ին տուր | 15:30 |
| 21 փետրվարի | 2-րդ տուր | 15:30 |
| 22 փետրվարի | 3-րդ տուր | 15:30 |
| 23 փետրվարի | 4-րդ տուր | 15:30 |
| 24 փետրվարի | 5-րդ տուր | 15:30 |
| 25 փետրվարի | 6-րդ տուր | 12:00 |
| 26 փետրվարի | 7-րդ տուր | 12:00 |
| 27 փետրվարի | 8-րդ տուր | 15:30 |
| 28 փետրվարի | 9-րդ տուր | 15:30 |

***Մինչև 8 տարեկան պատանիների մրցաշար***

Մասնակցելու իրավունք ունեն առնվազն 4-րդ մարզական կարգի 1 բալ ունեցող այն շախմատիստները, ովքեր ծնվել են 2014թ. դեկտեմբերի 31-ից հետո:

2-րդ, 1-ին մարզական կարգ և վարկանիշ ունեցող շախմատիստները մասնակցում են հաջորդ փուլից:

1-ից 16-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2023թ. մինչև 8 տարեկան պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

***Մինչև 10 տարեկան պատանիների մրցաշար***

Մասնակցելու իրավունք ունեն առնվազն 3-րդ մարզական կարգ ունեցող շախմատիստները, ովքեր ծնվել են 2012թ. դեկտեմբերի 31-ից հետո:

1-ին մարզական կարգ ունեցող շախմատիստները մասնակցում են հաջորդ փուլից:

1-ից 25-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2023թ. մինչև 10 տարեկան պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

***Մինչև 12 տարեկան պատանիների մրցաշար***

Մասնակցելու իրավունք ունեն առնվազն 2-րդ կարգ ունեցող շախմատիստները, ովքեր ծնվել են 2010թ. դեկտեմբերի 31-ից հետո:

1-ից 20-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2023թ. մինչև 12 տարեկան պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

***Մինչև 14 տարեկան պատանիների մրցաշար***

Մասնակցելու իրավունք ունեն առնվազն 1-ին կարգ ունեցող շախմատիստները, ովքեր ծնվել են 2008թ. դեկտեմբերի 31-ից հետո, իսկ 2009թ. դեկտեմբերի 31-ից հետո ծնված շախմատիստները՝ առնվազն 1-ին մարզական կարգի 1 բալ:

1-ից 18-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2023թ. մինչև 14 տարեկան պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

***Մինչև 16 տարեկան պատանիների մրցաշար***

Մասնակցելու իրավունք ունեն առնվազն 1-ին կարգ ունեցող շախմատիստները, ովքեր ծնվել են 2006թ. դեկտեմբերի 31-ից հետո:

1-ից 12-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք են ստանում մասնակցելու Հայաստանի 2023թ. մինչև 16 տարեկան պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին:

Ընտրական բոլոր մրցաշարերում **արգելվում է** այն շախմատիստների մասնակցությունը, ովքեր որևէ տարիքային խմբում Հայաստանի առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարում մասնակցության անհատական իրավունք ունեն:

Հայաստանի պատանիների առաջնության երևանյան ընտրական փուլի մասնակիցների հայտերը Հայաստանի շախմատի ակադեմիա պետք է ներկայացնեն մինչև 2023թ. փետրվարի 13-ը /հայտերի ընդունման վերջնաժամկետն է/:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 043 44 84 73 հեռախոսահամարով:

Հայտերը լրացված պետք է ուղարկել **info@chessacademy.am** էլ. հասցեին մինչև **փետրվարի 13-ը:**

Մուտքավճարները պետք է փոխանցել Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամի հաշվեհամարին՝

**Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ**
**Հ/հ 1570018417800100**

**Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել մրցաշարի անունը, մասնակցի անունը, ազգանունը և հայրանունը, տարիքային խումբը, ծննդյան տվյալները, կարգը, մարզիչը և կոնտակտային հեռախոսահամար:**